ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 72-Լ

«26» 09 2025թ. ք. Երևան

ԿԱՊԱՆԻ ԿԱՅԱԶՈՐԻ, ԼՈՌՈՒ ԿԱՅԱԶՈՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգի 39-րդ կետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կապանի կայազորի, Լոռու կայազորի և Երևանի կայազորի զինվորական դատախազություններում իրականացնել 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման ուղղություններով համալիր ստուգում՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ստուգումն իրականացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Դավիթ Նավասարդյան (աշխատանքային խմբի ղեկավար) - ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնի պետի պաշտոնակատար,

Արշակ Մարտիրոսյան - Երևանի կայազորի զինվորական դատախազ,

Վիգեն Հարությունյան - Լոռու կայազորի զինվորական դատախազ,

Վազգեն Վարդանյան - ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետի պաշտոնակատար,

Էդուարդ Պողոսյան - ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի դատախազ:

3. **Աշխատանքային խմբի ղեկավարին՝** սույն հրամանի ստորագրումից հետո՝ երկօրյա ժամկետում, դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման առանձին ուղղություններով նշանակել պատասխանատուներ, իսկ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը ստուգման արդյունքներով կազմել ամփոփ զեկուցագիր և ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

4. **Աշխատանքային խմբի անդամներին՝** ստուգումն իրականացնել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը և արդյունքներով կազմված տեղեկանքները ներկայացնել աշխատանքային խմբի ղեկավարին:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Կապանի կայազորի, Լոռու կայազորի և Երևանի կայազորի զինվորական դատախազներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

Հավելված
ՀՀ գլխավոր դատախազի
«26» սեպտեմբերի 2025թ. հրամանի

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Կապանի կայազորի, Լոռու կայազորի և Երևանի կայազորի զինվորական դատախազություններում 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման ուղղություններով համալիր ստուգման

1.Ստուգման իրականացման մեթոդիկան.

1) Դատախազական լիազորությունների իրականացման, ինչպես նաև հանցավորության վերլուծության հետ կապված ստուգումն իրականացվում և արդյունքները ստուգման տեղեկանքում ընդգրկվում են ըստ ՀՀ քրեական օրենսգրքի առանձին բաժիններով նախատեսված հանցագործությունների տեսակների, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ բաժնի դեպքում՝ նաև ըստ առանձին գլուխների:

2) Աշխատանքային խմբի ղեկավարի կողմից առանձին ուղղություններով նշանակված պատասխանատուները ստուգման արդյունքները ներկայացնում են առանձին տեղեկանքներով:

3) Տեղեկանքներով ներկայացված արդյունքները աշխատանքային խմբի ղեկավարի կողմից միավորվելու և ամփոփվելու են ստուգման միասնական տեղեկանքում:

2. Ստուգման ենթակա ուղղությունները.

1) Հանցավորության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի վերլուծության մակարդակը, ինչպես նաև հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքների պարզման և հանցագործությունների բացահայտման վիճակը.

2) Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ իրականացված հսկողության վիճակը.

3) Դատարանում մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վիճակը.

4) Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության իրականացման վիճակը.

5) ՀՀ գլխավոր դատախազի հրամանների, հանձնարարականների, ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերի որոշումների, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունների որոշումների պահանջների ժամանակին և պատշաճ կատարման վիճակը.

6) Դիմումների, բողոքների ու գրագրությունների քննարկման և քաղաքացիների ընդունելության կազմակերպման վիճակը.

7) Ներքին կարգապահական կանոնների պահպանման վիճակը.

8) Դատախազության գործունեության կազմակերպման, աշխատանքների վերահսկման, վիճակագրության (ներառյալ՝ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգի լրացման) վարման վիճակը: